ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՏԵՂԵԿԱՆՔ

2023 Թ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՆՐԱՆՑ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ 2024

Freedom House

HELSINKI CITIZENS' ASSEMBLY

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

www.hcav.am

Հեղինակային խումբ՝

Արթուր Սաքունց

Անի Չատինյան

Ալբերտ Նալբանդյան

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել ժողովրդավարության զարգացման հիմնադրամի, Սիգրիդ Ռոզինգ Թրաստ հիմնադրամի և "Ֆրիդոմ Հաուսի" օժանդակության շնորհիվ: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և "Ֆրիդոմ Հաուսի" տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ներածություն

2023թ. սեպտեմբերի 19-ին ՌԴ խաղաղապահ զորախմբի պատասխանատվության գոտում Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերը իրականացրեցին ռազմական գործողություններ Լեռնային Ղարաբաղի դեմ: Լեռնային Ղարաբաղի բնակչությունը զինված ուժի սպառնալիքի ներքո ստիպված լքեց իր տները և օրերի ընթացքում բռնի տեղահանվեց Հայաստանի Հանրապետություն:

Փաստացի փախստականի կարգավիճակում հայտնված մարդկանց աջակցելու նպատակով ՀՀ Կառավարությունը ձեռնարկեց լայնածավալ հումանիտար օգնության տրամադրման աշխատանքներ՝ ֆինանսական աջակցության տարբեր ծրագրերի իրականացում, կարիքի գնահատում, ստեղծեց ըստ գտնվելու վայրի գրանցման համակարգ ՏԻՄ-երում և մարզպետարաններում ձևավորված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հաշվառման աշխատանքային խմբերի հիման վրա: Այս աջակցման ծրագրերի ընթացքը, ինչպես նաև բռնի տեղահանված անձանց իրավական կարգավիճակի հետ կապված առկա օրենսդրական բացերը բացասական ազդեցություն են ունենում մարդասիրական ճգնաժամի հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց հումանիտար աջակցության արդյունավետության վրա: Այդ պատճառով իրավական աջակցության շրջանակներում Կազմակերպության կողմից իրավական կարգավորումների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվում նաև պետական մարմիններին, համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով:

Բռնի տեղահանված քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 2023թ նոյեմբերից 2024 թվականի հոկտեմբերի 30-ը ժամանակահատվածում անվճար իրավաբանական աջակցություն է տրամադրել ՀՀ բոլոր մարզերում կոնտակտային անձանց և իրավաբանների միջոցով: Իրավաբանական աջակցության նպատակն է իրավաբանական և տեղեկատվական խորհրդատվության միջոցով նպաստել կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերին բռնի տեղահանված անձանց հասանելիությանը, մշտադիտարկել պետական և համայնքային աջակցության ծրագրերի իրականացման արդյունավետությունը մարզերում, ներկայացնել առաջարկություններ իրականացվող ծրագրերի և հետագա քաղաքականությունների և ռազմավարությունների արդյունավետության բարձրացման համար:

Սույն զեկույցը 2024թ.-ի հուլիսին արդեն իսկ հրապարակված զեկույցի լրացված տարբերակն է:

Կազմակերպության կողմից իրականացված իրավական աջակցության շրջանակները

2023 թվականի նոյեմբերից Կազմակերպությունը բռնի տեղահանվածներին տրամադրում է իրավական աջակցություն ՀՀ կառավարության որոշումներով հաստատված սոցիալական աջակցությունների մատչելիության ապահովման, հասանելիության և իրացման ուղղությամբ:

Իրավական աջակցությունը տրամադրվել է Երևան քաղաքում և ՀՀ բոլոր մարզերում թվով 12 կոնտակտային անձանց (յուրաքանչյուր մարզի համար մեկ կոնտակտային անձ, Երևան քաղաքում երկու կոնտակտային անձ) և թվով 7 իրավաբանների ներգրավմամբ, ովքեր ահազանգի միջոցով կապ են հաստատում իրենց գործունեության մարզում բնակվող բռնի տեղահանված անձանց հետ, կատարել տնայցեր, կարիքների գնահատում, անհրաժեշտության դեպքում կազմվել են իրավաբանական նշանակության փաստաթղթեր ուղղված ՀՀ գերատեսչություններին բռնի տեղահանված արցախցիների խնդիրների լուծման հարցերով:

2023 թվականի նոյեմբեր ամսից մինչև 2024 թ. նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում Կազմակերպության կոնտակտային անձիք և իրավաբանները հանդիպումներ և խորհրդատվություն են տրամադրել 1967 բռնի տեղահանված անձանց:

Իրավախորհրդատվության արդյունքում, արձանագրված խնդիրների շրջանակներում մինչ օրս տարբեր պետական մարմիններ է ուղարկվել 444 գրություն և դեռևս 3 հայցադիմում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 349 գրություն

ՀՀ ներքին գործերի նախարարություն 45 գրություն

ՀՀ առողջապահության նախարարություն 15 գրություն

ՀՀ Կառավարության հումանիտար կենտրոն 14 գրություն

ՀՀ գլխավոր դատախազություն 2 հանցագործության մասին հաղորդում

ՀՀ արդարադատության նախարարություն 9 գրություն

ՀՀ պաշտպանության նախարարություն 3 գրություն

ՀՀ ֆինանսների նախարարություն (կենտրոնական բանկ) 8 գրություն

ՀՀ ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան 3 հայցադիմում (2 դիմում իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման պահանջով:

1 դիմում երեխայի սերման փաստի պահանջով:)

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել 349 գրությունից, որից

1.1) ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշմամբ միանվագ դրամական սոցիալական աջակցության շահառու ճանաչվելու համար ներկայացվել է 32 գրություն, որից 12 բռնի տեղահանված անձ ճանաչվել է աջակցության շահառու, 18 բռնի տեղահանված անձանց մերժվել է աջակցության տրամադրումը մինչև 2024 թվականի հունվարի 31-ը սահմանված ժամկետում դիմում չներկայացնելու հիմքով: Բոլոր այն դեպքերում, երբ մերժումները կապված են եղել կառավարության կողմից սահմանված ժամկետում դիմումներ չներկայացնելու հետ, առաջարկություններ ենք ներկայացրել ՀՀ կառավարության հումանիտար կենտրոնին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ժամկետների սահմանափակումները վերացնելու կամ ժամկետների խախտման պատճառով ծրագրից դուրս մնացած անձանց խմբերի համար սահմանել նոր կարգ:

1.2) ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ որոշմամբ հաստատված աջակցության ծրագրի շրջանակներում շահառու ճանաչելու վերաբերյալ ներկայացվել է 224 գրություն:

Ներկայացված գրություններով՝

- 89 գրությամբ ներկայացված անձինք ճանաչվել են աջակցություն շահառու,
- 122 տեղահանված արցախցու մերժվել է աջակցության տրամադրումը,
- 13 գրության պատասխան Կազմակերպությունը դեռևս չի ստացել:

ՀՀ Կառավարության հոկտեմբերի 12-ի 1763-Լ որոշման շահառուների շրջանակը ՀՀ Կառավարության 2024 թվականի մարտի 28-ի N 447-Լ որոշմամբ ընդլայնվեց, և աջակցության շահառու հանդիսացան նաև 2020 թվականին տեղահանված անձինք, սակայն Կազմակերպություն դիմած քաղաքացիները աջակցության շահառու չեն ճանաչվել օպերատիվ շտաբի կողմից տվյալները տրված չլինելու պատճառով, մինչդեռ այդ անձինք 2020 թվականի տեղահանումից հետո օգտվել են այդ պահին իրականացվող աջակցությունից:

Նման պայմաններում հատկանշական է առանձնացնել այն փաստը, որ 122 մերժումներից 62-ը վերաբերել է 2020 թվականի առանձին շրջաններից տեղահանված անցանց, մասնավորապես, 36 անձի սոցիալական աջակցության շահառու ճանաչվելու դիմումը մերժվել է ՀՀ կառավարության 17.02.2022 թվականի 169-Ն «Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագիրը և Հայաստանի Հանրապետության առանձին գյուղական բնակավայրերի ցանկը հաստատելու մասին» որոշման շրջանակներում հավաստագիր ստացած լինելու հիմքով, իսկ 26 անձի անձի դեպքում մերժվել է տվյալները օպերատիվ շտաբի կողմից տրամադրված չլինելու պատճառով, մինչդեռ վերջիններս հանդիսացել են 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց տրամադրվող աջակցությունների շահառու: Կազմակերպությունը ստացված որևէ մերժման հետ հաշտ չէ և դրանք բողոքարկման մեխանիզմներ է մշակել:

1.3) ՀՀ կառավարության 9 նոյեմբերի 2023 թվականի N 1957-Լ որոշմամբ շահառու ներգրավվելու նպատակով ներկայացվել է 52 գրություն, որից 39 գրությամբ ներկայացված շահառուներին տարամադրվել է իրենց հասանելիք սոցիալական աջակցությունը, 13 -ին մերժվել է աջակցության տրամադրումը՝ բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վերաբերյալ տեղեկություն ստանալու համար համաձայնության բացակայության կամ բանկային հաշիվներում 2.000.000 ՀՀ դրամը գերազանցող գումարի առկայության հիմքով: Այն անձանց, ում սոցիալական աջակցության ծրագրերով հասանելի աջակցությունների տրամադրումը մերժվել է փաստաթղթերում առկա խնդիրների պատճառով, Կազմակերպությունը ձեռնարկել է գործողություններ մատնանշված խնդիրները վերացնելու և ամբողջական փաստաթղթերով դիմումները կրկին ուղարկելու ուղղությամբ:

1.4) ՀՀ պետական կենսաթոշակներից օգտվելու իրավունքի ապահովման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել թվով 12 գրություն, որոնցից 10-ը բավարարվել է և վերացվել է ծառայության կողմից տրամադրված նախկին մերժումները (այդ թվում բանավոր), որոնք կապված էին անձի կողմից փաստաթղթերի թերի ներկայացմամբ կամ դրանցում առկա անհամապատասխանությունների հետ, կամ Լեռնային Ղարաբաղի կենսաթոշակի մասին տեղեկատվական տվյալների բացակայությամբ: Ներկայացված 2 գրությամբ մերժվել է պետական կենսաթոշակի տրամադրումը՝ ՀՀ-ում հաշվառում չունենալու հիմնավորմամբ: ՀՀ

հաշվառում չունենալու հիմքով մերժում ստացած քաղաքացիները հետագայում հաշվառվել են ՀՀ-ում, այնուհետև ստացել են ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ, որի հիմքով նշանակվել է պետական կենսաթոշակ:

1.5) ՀՀ պետական նպաստներից օգտվելու իրավունքի իրացման նպատակով՝ ներկայացվել է 8 գրություն, որից՝

2-ը վերաբերվել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողներին նպաստ նշանակելուն, սակայն դիմումները մերժվել են այն հիմքով, որ դիմումատուները ՀՀ-ում չեն գտնվել աշխատանքային հարաբերություններում,

4 գրություն՝ թաղման նպաստից օգտվելու համար, որոնք բավարարվել են,

2 գրություն՝ ընտանեկան նպաստից օգտվելուն, սակայն 1-ին դեպքում դիմումը մերժվել է միասնական սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժնում դիմում ներկայացված չլինելու հիմքով, իսկ մյուս դեպքում այն հիմքով, որ անձի մասին ստացված տվյալներով վերջինս անվամբ տրանսպորտային միջոց է գրանցված եղել:

1.6) 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված 7 անձանց համար ներկայացվել է գրություններ ՀՀ Կառավարության 17.08.2022 թվականի N 169-Լ «Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագիրը և Հայաստանի Հանրապետության առանձին գյուղական բնակավայրերի ցանկը հաստատելու մասին» որոշման շահառու հանդիսանալու և անհրաժեշտ պայմանների մասին, ներկայացված գրություններից 6 մերժվել է, 1-ի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ, հետագայում խնդիրները վերացնելու և շահառու ճանաչվելու համար:

1.7) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարարի հետ ունեցած հանդիպումից հետո ՀՀ կառավարության 12 հոկտեմբերի 2023 թվականի N 1763-Լ որոշման և ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի «Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածներին միանվագ դրամական սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1675-Լ որոշման շրջանակներում շահառու չդարձած անձանց մասով կրկնակի 2

գրություն է ներկայացվել, որից հետո ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրվել են նախորդ մերժումների իրավական հիմքերը:

2.ՀՀ ներքին գործերի նախարարություն է ներկայացվել 45 գրություն.

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ հաստատված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու մասին ներկայացվել է 45 գրություն, որից 2 գրություն բավարարվել է և տրամադրվել է ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթուղթ, 40 գրություն մերժվել է անձի երկքաղաքացի լինելու հիմքով (քաղաքացիության հիմքով սահմանափակումը վերացնելու նպատակով կառավարության որոշման մեջ փոփոխություն իրականացնելու մասին առաջարկություն է ներկայացվել ՀՀ Կառավարություն), :

Հաջորդ գրությունը վերաբերել է ճանապարհատրանսպորտային տեսաձայնագրող սարքերով արձանագրված իրավախախտումը անձի ԼՂ հասցեին ուղարկելու հիմքով որոշումն անվավեր ճանաչելուն, սակայն այն չի բավարարվել:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթական համալիրում ուսանողի ուսման վարձի զեղչ կիրառելու մասին 1 գրություն է ներկայացվել, որի պատասխանով պարզաբանվել է զեղչի կիրառման պայմանների մասին, նշելով, որ զեղչի համակարգը կիրառվում է հաշվի առնելով ուսման առաջադիմությունը և քանի որ կազմակերպություն դիմած ուսանողի առաջադիմությունը սահմանված շեմը չի հաղթահարել, զեղչը իր նկատմամբ չի կիրառվել, որոնց շրջանակներում պարզաբանվել է:

2 գրությամբ դիմել ենք անձանց 2023 թվականի սեպտեմբեր 19-ի ադրբեջանական ագրեսիայի հետևանքով ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում հաշվառված լինելու փաստի մասին տեղեկություն ստանալու համար:

---

3. ՀՀ առողջապահության նախարարություն ներակայացվել է 15 գրություն առողջապահական ոլորտում պետության կողմից երաշխավորված և արտոնյալ պայմաններով բուժսպասարկում ստանալու նպատակով, որից 12 գրություն բավարարվել է և գրություններով նշված 12 անձանց տրամադրվել է պետության կողմից երաշխավարված և արտոնյալ պայմաններով անվճար բուժսպասարկում: Ներկայացված գրություններից 3-ը մերժվել են ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ N 318-Ն որոշմամբ սահմանած պետության կողմից անվճար և ատոնյալ պայմաններով սահմանված չլինելու հիմքով (նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական օգնության հիմքով):

4.ՀՀ կառավարության «Հումանիտար» կենտրոն է ներկայացվել 14 գրություն:

Ներկայացված 14 գրություններից 4-ը ունեցել են դրական ելք, մասնավորապես, 3 գրությունները վերաբերել են ՀՀ կառավարության որոշումներով հաստատված սոցիալական աջակցությունների տրամադրմանը: Գրություններից 9 վերահասցեագրվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որոնք հակարգային լուծում պահանջող հարցեր են եղել սակայն լուծում այդպես էլ: Կազմակերպության մյուս գրությունով Հումանիտար կենտրոն է ուղարկվել մշակված տեղեկանքը:

---

5. ՀՀ գլխավոր դատախազություն է ներկայացվել է հացագործության մասին 2 հաղորդում: Ներկայացված հանցագործության մասին հաղորդումներից մեկը վերաբերել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մի քանի ընտանիքներից բնակարանի վարձակալության համար խաբեությամբ վերցված վարձակալման 2 ամսվա գումարին, սակայն բնակարանը վարձակալության չի հանձնվել որևէ ընտանիքի:

Հաջորդը՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաներին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված սոցիալական աջակցությունների շահառու հանդիսանալու համար տվյալները ծնողի անվամբ

գրանցելու համար, միասնական սոցիալական ծառայության աշխատակցի կողմից լրացվել է այլ անձի անունով, ով ամիսներ շարունակ ստացել է երեխաներին հասանելիք սոցիալական աջակցությունը: Ներկայացված երկու հաղորդումներով նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ Քրեական օրենսգրքի 255-րդ և 457-րդ հոդվածների հատկանիշներով, որոնք գտնվում են նախաքննության փուլում:

---

6. ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել է 9 գրություն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ծննդյան վկայականի կրկնօրինակը տրամադրելու հարցով, որին ՀՀ արդարադատության նախարարությունից ի պատասխան հայտնել են, որ ծննդյան վկայականի կրկնօրինակը ստանալու նպատակով անհրաժեշտ է ցանկացած ՔԿԱԳ սպասարկման կենտրոն ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով ներկայացնել դիմում: Ներկայանալուց և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելուց հետո կրկին անձանց մերժվում է ծննդյան վկայականի կրկնօրինակը տրամադրել՝ փաստաթղթային արխիվում հիմքային փաստաթղթերի բացակայության պատճառով: Այս մերժումների վերացման և ի վերջո վկայականների օրինակները վերականգնելու նպատակով կազմակերպության իրավաբանները դիմումներ են ներկայացնում դատարան

7. ՀՀ պաշտպանության նախարարություն ներկայացվել է 3 գրություն.

Զինվորական կենսաթոշակի նշանակման համար 1 գրություն է ներկայացվել ՀՀ Պաշտպանության նախարարություն, որը բավարարվել է և կազմակերպություն դիմած բռնի տեղահանված անձին նշանակվել է զինվորական թոշակ:

Զինվորական փաստաթղթերի կրկնօրինակների տրամադրման վերաբերյալ 1 գրություն 2024 թվականի մարտի 1-ին, որի վերաբերյալ դեռևս պատասխան չի ստացվել, սակայն հեռախոսազանգի միջոցով տեղեկացել ենք, որ դեռևս քննարկման փուլում է:

Զինվորական ծառայության ընթացքում շաբաթ օրերին աշխատելու համար փոխհատուցում ստանալու մասին 1 գրություն, որը ևս գտնվում ուսումնասիրության փուլում:

---

8. ՀՀ Ֆինանսների նախարարություն և ՀՀ կենտրոնական բանկ 7 գրություն է ներկայացվել ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2326-Ն որոշմամբ հաստատված բանկում պարտավորությունների գիջման մասին:

6 անձանց մերժվել է վարկային պարտավորության գիջումը այն մեկնաբանմամբ, որ վարկառուն անձամբ պետք է վարկը տրամադրած ֆինանսական կազմակերպության հետ բանակի հարցի լուծումը, հատկանշական է այն հանգամանքը որ վարկային պարտավորության գիջումները չեն իրականացվում ՎՏԲ բանկի կողմից: Կազմակերպության կողմից ներկայացված 1 անձի վարկային պարտավորությունը գիջվել է:

9.Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ուղարկվել 185 դիմում սեփականության իրավունքի, վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի, կյանքի իրավունքի, խտրականությունից զերծ մնալու իրավունքի և կոլեկտիվ արտահայտման արգելքի իրավունք խախտման հիմքով: Դիմումները դատարանում ստացվել են:

Կազմակերպության կողմից տրամադրված իրավական աջակցության ընթացքում արձանագրված համակարգային խնդիրները

Կազմակերպության կողմից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տրամադրած իրավական աջակցության շրջանակներում արձանագրվել են համակարգային խնդիրներ, որոնք ներկայացնում ենք ստորև:

1) ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ «2023 թվականի սեպտեմբերի 19-ից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին ժամանակավոր կացարանում բնակվելու և կոմունալ ծառայությունների ծախսերի կատարմանն օժանդակելու համար սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշման հավելված 2-ի 20-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝

«20. Դիմումը մերժվում է

3) այն անձի և նրա ընտանիքի անդամների (ամուսին, անչափահաս երեխա) մասով, ով Հայաստանի Հանրապետությունում սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ բաժնային) իրավունքով ունի բնակվելու համար նախատեսված անշարժ գույք:

Բռնի տեղահանված անձանց աջակցության շահառու ճանաչելու համար անշարժ գույքի մասին տեղեկատվությունը ստացվում է ՀՀ կադաստրի կոմիտեից, որտեղ առկա փաստերի համաձայն անշարժ գույքի նպատակային նշանակությունը նշված է բնակելի, սակայն գույքի վիճակը և պայմանները բավարար չեն գույքը բնակելի դիտարկելու համար: Արձանագրված այս համակարգային խնդրի առթիվ կազմակերպությունը դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որին ի պատասխան ստացել ենք հետևյալ պատասխանը. «***Բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հարցում որոշակի վերապահումներ կատարելու հարցը աշխատանքային կարգով քննարկվել է Կադաստրի կոմիտեի հետ: Կատարվել է հարցում՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքի համասեփականատերերի ցանկի և ընդհանուր բաժնային սեփականության իրավունք ունենալու դեպքում համասեփականատերերի բաժնեմասերի առկայության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հնարավորության վերաբերյալ:***

Նախարարության կողմից ուսումնասիրության արդյունքների ամփոփումից հետո, որոշման մեջ բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հարցում որոշակի վերապահումներ կատարելու նպատակահարմարության հարցը կքննարկվի Հումանիտար կենտրոնում:»

Արդյունքում՝ մինչ օրս վերոգրյալ խնդրի մասին որոշակի վերապահումներ կատարելու մասին պատասխան Կազմակերպությունը տեղեկություն չի ստացել, և այս հիմքով մերժումները շարունակվում են:

ՀՀ կառավարությունը 2024 թվականի փետրվարի 29-ի N 299-Լ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի 1675-Լ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի 1957-Լ որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշմամբ փոփոխություն է կատարվել 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ որոշման մեջ: Կատարված փոփոխությամբ «ժամանակավոր կացարանում բնակվելու համար սոցիալական աջակցության ամսական չափը կազմում է 40.000ՀՀ դրամ նաև այն դեպքերում, երբ շահառուն Հայաստանի Հանրապետությունում ունի բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված միայն մեկ անշարժ գույք, որի բաժնեմասին (ընդհանուր համատեղ սեփականության դեպքում

համասեփականատերերի բաժնեմասերը դիտարկվում են հավասար չափերով) **համապատասխան մակերեսը փոքր է 20 քառակուսի մետրից»**:

<u>Ներկայացված համակարգային խնդիրը լուծվել է միայն այն անձանց նկատմամբ, ում սեփականության մակերեսը չի գերազանցել 20 քառակուսի մետրը, իսկ մյուսներինը ում սեփականության իրավունքով պատկանող գույքը թեկուզ բնակելի չէ, բայց և այնպես շարունակում են չհամարվել աջակցության շահառու</u>:

Սույն որոշմամբ հաստատված է 2020 թվականի բռնի տեղահանված անձանց ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերով մերժումն հիմք է հանդիսանում օպերատիվ շտաբի կողմից տվյալները փոխանցված չլինելը կամ ՀՀ կառավարության 169-Ն որոշմամբ հաստատված հավաստագրի շահառու հանդիսանալու հիմքով:

Նման պայմաններում հատկանշական է այն հանգամանքը, որ այն անձանց ում մերժում են դիտարկել աջակցության ծրագրի շահառու, 2020 թվականի տեղահանումից հետո հանդիսացել են այդ ժամանակ տրամադրվող աջակցությունների շահառու:

ՀՀ կառավարությանը առաջարկում ենք 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և տրամադրվող սոցիալական աջակցության շահառու դիտարկել այն անձանց, ովքեր ունեն գրանցված անշարժ գույք, սակայն այդ գույքը չունի բնակվելու համար բավարար պայմաններ՝ անկախ մակերեսի չափից: Միաժամանակ այս բացառության շրջանակներում դիմումների ընդունման համար սահմանել նոր ժամկետներ, ինչպես նաև օպերատիվ տվյալների բացակայությամբ պայմանավորված մերժումները վերացնել և դիտարկել այն հանգամանքը, որ վերջիններս Լեռնային Ղարաբաղից և բռնի տեղահանված են:

1.1) ՀՀ կառավարության ***2023 թվականի հոկտեմբերի 12-ի*** 1763-Ն որոշմամբ սահմանված շահառուների շրջանակը ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 28-ի N 447-Ն որոշմամբ ընդլայնվեց և աջակցության շահառու համարվեցին նաև 2020 թվականին տեղահանվածները, սակայն սույն դեպքում առկա է այն խնդիրը, որ 2020 թվականի տեղահանված արցախցիների՝ աջակցության շահառու հանդիսանալու դիմումները մերժվում են միանվագ սոցիալական աջակցության (100.000 դրամի) շահառու չհանդիսանալու, կամ օպերատիվ շտաբի կողմից տրված անձանց ցուցակներում ներգրավված չլինելու պատճառաբանությամբ, մինչդեռ վերջիններս առանց որևէ խնդրի հանդիսացել են 2020 թվականի տեղահանված անձանց տրամադրվող աջակցությունների շահառու, ինչը միանշանակ ենթադրում է, որ այս անձանց տվյալները առկա են եղել օպերատիվ շտաբի շտեմարաններում:

Նույն որոշմամբ սահմանված է սահմանափակում բնակապահովման ծրագրի շահառու հանդիսանալու հիմքով, մինչդեռ մերժվում են նաև այն անձինք, ովքեր փաստացի դեռևս չեն ճանաչվել բնակապահովման ծրագրի շահառու: Այսինքն, կամ դիմում չեն ներկայացրել դեռևս կամ ներկայացնելուց հետո չեն ստացել համապատասխան որոշում ու բնակապահովման հիպոթեկային վարկ, կամ տեղեկացված չեն եղել, որ իրենք հանդիսանում են ծրագրի շահառու: Ստացվում է այնպես, որ կիրառվող սահմանափակումները տեղին չեն և ըստ էության աջակցության ծրագրերից զրկվում են այն անձինք, ովքեր դեռևս ճանաչված չեն բնակապահովման ծրագրի շահառու :

Առաջարկում ենք, ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ որոշմամբ 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանվածների նկատմամբ կիրառվող սահմանափակումը վերացնել և այդ սահմանափակումը կիրառել միայն այն անձանց նկատմամբ, ովքեր բնակապահովման ծրագրով ձեռք են բերել բնակարան, այլ ոչ այն անձանց նկատմամբ, ովքեր հանդիսանում են շահառու, բայց դեռևս ձեռք չեն բերել բնակարան:

1.2) *ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ «2023 թվականի սեպտեմբերի 19-ից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին ժամանակավոր կացարանում բնակվելու և կոմունալ ծառայությունների ծախսերի կատարմանն օժանդակելու համար սոցիալական աջակցության միջոցառումը տրամադրման կարգը հաստատելու մասին» և 2023 թվականի նոյեմբերի 9 -ի N 1957-Լ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին առաջնային սպառողական ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին»* որոշումներով հաստատված է, որ տրամադրվող սոցիալական աջակցությունների շահառու հանդիսանալու համար անհրաժեշտ է դիմումներ ներկայացնել առցանց տարբերակով, չնայած՝ բռնի տեղահանված անձինք իրենց դիմումները լրացրել են սահմանված կարգով, և հանդիսացել են աջակցությունների շահառու, սակայն ամիսներ շարունակ չստանալով հասանելի գումարները, դիմել են միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ, որտեղից վերջիններիս հայտնել են, որ սոցիալական աջակցության համակարգում իրենց տվյալները չեն մուտքագրվել տեխնիկական պատճառներով, սակայն դիմում ներկայացրած անձանց տվյալները համակարգում չներառվելու

պատճառների մասին տեղեկացված չեն եղել ու փաստացի զրկվել են աջակցություն ստանալու իրավունքից ոչ իրենց մեղքով, զուտ համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով:

Վերոնշյալ սոցիալական աջակցությունների շահառու են հանդիսանում 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված անձինք, սակայն նրանք, ովքեր գործուղման և նման այլ, պատճառներով մինչև բռնի տեղահանվելը գտնվել են ՀՀ-ում, և վերջիններիս բնակության և հաշվառման հասցեն հանդիսացել է Լեռնային Ղարաբաղը, սակայն 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով օբյեկտիվ հնարավորություն չեն ունեցել վերադառնալ Լեռնային Ղարաբաղ, այս պահին չեն համարվում շահառու:

2.ՀՀ կառավարությունը 2024 թվականի փետրվարի 29-ի N 299-Լ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի 1675-Լ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1763-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի 1957-Լ որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման համաձայն՝ 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ կառավարության որոշման մեջ կատարվել են փոփոխություններ, համաձայն որոնց շահառու են համարվում Լեռնային Ղարաբաղի բժշկական կազմակերպությունների կողմից ուղեգրված և 2022 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ն ընկած որևէ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում հիվանդանոցային ձևով (պայմաններում) բուժված (ներառյալ հիվանդանոցային ձևով ախտորոշիչ հետազոտությունները և վերականգնողական բուժումը) անձին ուղեկցող անձը, եթե միանվագ դրամական աջակցություն ստանալու համար նա ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 1675-Լ որոշման N 2 հավելվածի 26-րդ կետով սահմանված դիմում և նրա տվյալներն առկա են այդ որոշման 7-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության տրամադրած տվյալներում»:

Այսպիսով՝ կատարված փոփոխությամբ ծրագրի շահառու են դիտարկվել միայն Հայաստանի Հանրապետությունում հիվանդանոցային (պայմանների) բուժման դիմած անձինք, սակայն այն բնակիչները, ովքեր օբյեկտիվ հնարավորություն չեն ունեցել բլոկադայի հետևանքով վերադառնալ Լեռնային Ղարաբաղ, զրկվում են սոցիալական աջակցություններից օգտվելու իրավունքից:

Առաջարկում ենք Լեռնային Ղարաբաղի այն բնակիչներին, ովքեր գործուղման կամ այլ պատճառներով 2022 թվականի դեկտեմբերի 12-ից առաջ գտնվել են Լեռնային Ղարաբաղից դուրս և միաժամանակ ամբողջ ընթացքում չեն փոխել Լեռնային Ղարաբաղի հաշվառման իրենց հասցեն ճանաչել տրամադրվող սոցիալական աջակցությունների շահառու:

---

3) ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864-Ն «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշման հավելվածի 1-ին և 2-րդ կետերը սահմանում են.

1. *Ժամանակավոր պաշտպանության տակ վերցնել՝*

1) Լեռնային Ղարաբաղի բնակչության ռեգիստրի հաշվառումներով անցնող անձանց.

2)Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող այն անձանց, որոնց վերջին հաշվառման հասցեն եղել է Լեռնային Ղարաբաղում.

3) այն անձանց, որոնք չեն ունեցել հաշվառում Լեռնային Ղարաբաղի բնակչության ռեգիստրում, սակայն բնակվել են Լեռնային Ղարաբաղում և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվելուց հետո հաշվառվել են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կողմից:

2. Սահմանել, որ սույն որոշումը չի տարածվում սույն որոշման 1-ին կետում նշված, բայց այլ պետության քաղաքացիություն ունեցող անձանց նկատմամբ:

ՀՀ կառավարության նշված որոշման 2-րդ կետը սահմանում է, որ պաշտպանության տակ չեն կարող վերցվել Լեռնային Ղարաբաղի այն բնակիչները, ովքեր ունեն այլ պետության քաղաքացիություն: Կառավարության որոշմամբ սահմանված այս սահմանափակումը խոչընդոտում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ՀՀ պետական կենսաթոշակի կամ պետական նպաստի տրամադրման հարցում, քանի որ կենսաթոշակի և նպաստի նշանակման համար պարտադիր պայման է փախստականի կարգավիճակ ունենալը:

Նշված խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26 -ի N 1864-Ն որոշման 2-րդ կետում նշված այլ պետության քաղաքացիություն ունենալուց հետո նշել բացառությամբ "ՀՀ քաղաքացիության" եզրույթը:

---

4) 2023 թվականի սեպտեմբերի 19-ի ադրբեջանական ագրեսիայի հետևանքով բռնի տեղահանված անձինք իրենց հետ չեն հասցրել վերցնել կամ չեն կարողացել վերցնել Լեռնային Ղարաբաղում սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքերի սեփականության վկայականները, իսկ ՀՀ կադաստրի կոմիտեն դեռևս չունի Լեռնային Ղարաբաղում գրանցված գույքերի և սեփականատերերի մասին տեղեկատվական բազա:

ՀՀ Կառավարությանն առաջարկում ենք, համայնքների ղեկավարներից կամ համապատասխան պատասխանատու անձանցից հավաքագրել Լեռնային Ղարաբաղի բնակիչների ունեցած գույքի մասին տեղեկատվություն, դրանք համադրել սեփականատեր հանդիսացող անձանց վկայությունների հետ և ստեղծել Լեռնային Ղարաբաղում գրանցված, փաստացի տիրապետված գույքերի և սեփականատերերի մասին միասնական ու ամբողջական տեղեկատվական բազա:

5) Լեռնային Ղարաբաղի պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձինք ունեն գրանցված շարժական գույք, բռնի տեղահանումից հետո շարժական գույքը բերել են ՀՀ, սակայն սահմանված ժամկետում

որպես իրավաբանական անձ չեն հասցրել վերագրանցվել գրանցել ՀՀ պետական ռեգիստրում, իսկ այս պահին ցանկանում են իրենց գույքերը օտարել, սակայն, չունենալով իրավաբանական անձի կարգավիճակ ՀՀ-ում, գույքը չեն կարողանում օտարել, մասնավորապես, ՀՀ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում 2023 թվականի նոյեմբերի 22-ին կատարվել է ՀՕ-374-Ն փոփոխությունը, համաձայն որի օրենքի 27.2 և 35.1 հոդվածներում սահմանվել է «*Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը կամ իրավաբանական անձի պետական գրանցումը ճանաչելու վերաբերյալ դիմումները կարող են ներկայացվել պետական գրանցում և պետական հաշվառում իրականացնող մարմին և դրա կողմից ընդունվում են 2024 թվականի հունվարի 31-ը ներառյալ*», արդյունքում Լեռնային Ղարաբաղի պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձինք, տեղյակ չլինելով սահմանված իրավական կարգավորման մասին, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը կամ իրավաբանական անձի պետական գրանցումը ճանաչելու վերաբերյալ դիմումները չեն ներկայացրել պետական գրանցման և պետական հաշվառում իրականացնող մարմին:

ՀՀ կառավարությանը առաջարկում ենք, ՀՀ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 27.2 և 35.1 հոդվածներում կրկին կատարել փոփոխություն, սահմանվելով «Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը կամ իրավաբանական անձի պետական գրանցումը ճանաչելու վերաբերյալ դիմումների» ներկայացման ժամկետը երկարացնել՝ սահմանելով նոր ժամկետ:

Ներկայացված խնդրի լուծման վերաբերյալ արդարադատության նախարարությունից հայտնել են, որ օրենսդրական փոփոխությունների շրջանակներում առաջիկայում կքննարկվի խնդրին իրավական լուծում տալու հարցը:

---

6) ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի 2326-Ն «ՀՀ կառավարության որոշումը Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա ստեղծած հիմնադրամների, առանձին իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ ՀՀ ֆինանսական կազմակերպությունների դրամական պահանջների (գույքային իրավունքների) զիջման դիմաց պետական գանձապետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, հետգնման, մարման առանձնահատկությունները, առանձին իրավաբանական եվ ֆիզիկական անձանց պարտավորությունների ընտրանքի չափանիշները, ֆինանսական կազմակերպությունների կողմից դրամական պահանջների (գույքային իրավունքների) փոխանցման, փոխանցված դրամական պահանջների (գույքային իրավունքների) վերաբերյալ տեղեկատվության հրապարակման կարգը սահմանելու մասին» որոշման համաձայն ՀՀ կառավարությունը վճարել է Լեռնային Ղարաբաղի բնակիչների վարկային պարտավորությունները, սակայն արձանագրվել են դեպքեր, երբ անձինք հայտնել են, որ դեռևս այդ պարտավորությունները մարված չեն, իսկ բանկերն և վարկային կազմակերպությունները պահանջում են վճարել իրենց պարտավորությունները:

ՀՀ Կառավարությանը և ՀՀ կենտրոնական բանկին առաջարկում ենք տալ հստակ հանձնարարական՝ իրավական ակտի ընդունման մակարդակում բանկերին և վարկային կազմակերպություններին իրենց այն հաճախորդներին, ովքեր հանդիսանում են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, սակայն որոշակի չափանիշներով առանձնացված վարկառուներ չեն, հրապարակել վարկերը չմարելու իրավական հիմքերը:

---

7) Կազմակերպության կոնտակտային անձինք և իրավաբանները բռնի տեղահանված անձանց իրավական աջակցություն տրամադրելու ընթացքում արձանագրել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշ աշխատակիցների կողմից անբարեհամբույր ու անհարգալից վերաբերմունք բռնի տեղահանված անձանց նկատմամբ: Մասնավորապես, ՀՀ ՆԳՆ անձնագրային բաժանմունքների, և միասնական սոցիալական ծառայության Կոտայք, Արարատ, Արմավիր մարզերի և Երևան քաղաքի Նալբանդյան 13 հասցեում տեղակայված

ծառայության աշխատակիցներից, որոնց կողմից բացասական վերաբերմունք է ցուցաբերվում այն անձանց նկատմամբ, ովքեր դիմում են նույն ծառայությանը կամ բաժանմունքին մեկից ավելի անգամ և այն անձանց նկատմամբ, ովքեր 2 ամսից ավելի չեն ստանում հասանելի դրամական փոխանցումները և փորձում են հասկանալ պատճառները : Անհարգալից վերաբերմունքի մասին ահազանգեր ստացել ենք ամբողջ առաքելության ընթացքում:

Նշված խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք իրականացնել մասնագիտական վերապատրաստումներ և կարողությունների զարգացում ՀՀ ՆԳՆ անձնագրային բաժանմունքների և միասնական սոցիալական ծառայության այն աշխատակիցների հետ, ովքեր մասնագիտական գործունեության շրջանակներում աշխատում են կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց հետ: Ինչպես նաև հանրային ծառայության և մասին օրենքում և քաղաքացիական ծառայության մասին օրենքում համապատասխան փոփոխություն իրականացնել, դրանում ներառելով կյանքի դժվարին պայմաններում հայտնված անձանց հետ աշխատելու կարողության գնահատումը, որպես որակական ցուցանիշ:

---

8) ՀՀ Պետական կենսաթոշակների մասին օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում է տարիքային աշխատանքային կենսաթոշակի նշանակումը, որից օգտվելու հնարավորություն ունեն նաև բռնի տեղահանված արցախցիները: Կենսաթոշակի նշանակման մասին դիմումները մերժվում են Լեռնային Ղարաբաղի տարածքում անձի համար սոցիալական վճարներ կատարած լինելու մասին անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայի բացակայության հիմքով: Ստացվում է այնպես, որ պետությունը հնարավորություն է տվել դիմելու և ստանալու կենսաթոշակ հստակ իմանալով, որ չեն տեղափոխվել բազաները և անհրաժեշտ տեղեկատվությունը և այս հիմքով անձանց դիմումները մերժվում են:

ՀՀ Կառավարությանը առաջարկում ենք, տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձանց, իրենց կենսաթոշակ ստանալու իրավունքի ապահովման ուղղությամբ ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք կապված չեն լինելու բազաների կամ փաստաթղթերի առկայությունը ապացուցելու հետ:

9). ՀՀ կառավարության թիվ 1675 Լ 03.10.2023թ.որոշմամբ (100.000 ՀՀ դրամ) սահմանվել է, որ շահառու են այն անձինք, ովքեր դիմում են ներկայացրել մինչև 2024 թ. հունվարի 31-ը:

Կազմակերպության իրավական աջակցության տրամադրման շրջանակներում արձանագրել ենք դեպքեր, որ իրազեկվածության պակասի պատճառով բռնի տեղահանված մոտ երկու տասնյակ անձինք կան, ովքեր սահմանված ժամկետում չեն դիմել շահառու դառնալու համար և ըստ էության զրկված են բոլոր աջակցություններից: Այսպիսով՝ ժամկետի սահմանափակման պարագայում, այն էլ այն դեպքում, երբ հետագա ծրագրերից օգտվելու հնարավորությունը ուղղակի կախված է թիվ 1675-Լ որոշման շահառու հանդիսանալու պարտադիր պահանջից, խիստ մտահոգիչ է և անթույլատրելի:

ՀՀ Կառավարությանը առաջարկում ենք, այն անձանց նկատմամբ ովքեր օբյեկտիվ և հիմնավոր պատճառներով աջակցության շահառու հանդիսանալու դիմումները չեն ներկայացրել մինչև 2024 թվականի հունվարի 31-ը կառավարության որոշման մեջ փոփոխություն իրականացնելու միջոցով տալ հնարավորություն շահառու ճանաչվելու և աջակցության ծրագրերից օգտվելու:

10. Բռնի տեղահանված այն անձանց ովքեր իրենց տրամսպորտային միջոցները բռնի տեղահանման ժամանակ թողել են Լեռնային Ղարաբաղում, ՀՀ-ում տեղեկատվական բազաները ցույց են տալիս մեքենան որպես սեփականություն, համածայն որի չի տրամադրվում պետական նպաստ, իսկ նման խնդիրների վերացման համար անձիք ստիպված են լինում դիմել այլ գերատեսչությունների խնդրի լուծման նպատակով, սակայն մինչ օրս որևէ լուծում չի ստացվում:

Առաջարկում ենք իրականացնել գույքագրում, որտեղ առանձին տողերով կարձարձանագրվի այն գույքերը, որոնք բռնի տեղահանված անձինք ունեցել են և ստիպված են եղել թողնել դրանք Արցախում, այդ թվում շարժական և այն գույքերի ցանկը, որոնք տեղափոխվել են Հայաստան: Այս գույքագրումը հնարավորություն կտա մեկ բազայի միջոցով ունենալ և ստիպված թողնված գույքի մասին տեղեկատվություն և ՀՀ տեղափոխված գույքի մասին:

11. ՀՀ կառավարության 14 հունիս 898 Լ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովման ծրագիրը:

Հաստատված Որոշմամբ աջակցության շահառու հանդիսանալու սահմանափակումը և դիմումների մերժումը կապված է անձի ՀՀ քաղաքացիություն ունենալու պարտադիր պահանջի կատարման հետ, որը մեր դիտարկմամբ հակասում ՀՀ-ի կողմից վավերացված Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի 7-րդ և 13-րդ հոդվածների, միևնույն ժամանակ ՀՀ փախստականի և ապաստանի մասին օրենքի 19-րդ հոդվածի ամրագրված պահանջներին:

Այս խնդրի լուծման նպատակով որպես համակարգային խնդիր դիմել ենք ՀՀ կառավարության «Հումանիտար կենտրոն»-ի աշխատանքները համակարգող փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանին առաջարկել ենք Որոշմամբ հաստատված բնակարան ստանալու համար քաղաքացիություն ստանալու պարտադիր պայմանը փոխել խտրական լինելու հիմքով:

Առաջարկում ենք, ձեռնարկել համապատասխան միջոցները Որոշմամբ հաստատված բնակարան ստանալու համար քաղաքացիություն ստանալու պայմանը հանել, քանի որ անհիմն է ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պարտավորությունների տեսակետից, և հանդիսանում է խտրական վերաբերմունք բռնի տեղահանված արցախցիների նկատմամբ:

12. ՀՀ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում 30.10.2024 թ-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ներկայացրել է նախագիծ, որով նախատեսվում է՝ «ՀՀ կառավարության 12.10.2023թ.-ի N 1763-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) սահմանված սոցիալական աջակցության տրամադրման ժամկետի երկարացում ևս 3 ամսով՝ 2025 թվականի հունվար-մարտ ամիսների համար և տրամադրվող սոցիալական աջակցության ամսական չափը կկազմի 50000 դրամ: Որոշմամբ տրամադրվող սոցիալական աջակցության ավարտից հետո՝ 2025 թվականի ապրիլ ամսվանից առաջարկվում է սոցիալական աջակցություն տրամադրել բռնի տեղահանված առանձին խմբերի անձանց՝ փաստացի Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և

խաղաթացիության ծառայության կողմից հաշվառված՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության սահմանափակման խորը կամ ծանր աստիճան ունեցող անձանց, 63 և ավելի տարեկան անձանց, կերակրողին կորցնելու դեպքում՝ նպաստ ստացող անձանց (այսուհետ՝ կերակրողին կորցրած անձ) և մինչև 18 տարեկան երեխաներին, որի շրջանակներում սոցիալական աջակցության ամսական չափը յուրաքանչյուր շահառուի համար նախատեսվում է՝

1) 2025 թվականի ապրիլ ամսվանից մինչև հունիս ամիսը ներառյալ՝ 40000 դրամ.

2) 2025 թվականի հուլիս ամսվանից մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ՝ 30000 դրամ:»

Տեղեկանքի 1, 1.1, 1.2, կետերով արձանագրված խնդիրները որոնք լուծում չեն ստացել, սույն նախագծի շրջանակներում ներկայացրել ենք մեր առաջարկությունը այն հիմնավորմամբ, որ «Նախագծով չի հիմնավորվում այն դրույթը, թե ի՞նչ պատճառների արդյունքում է որոշվել սոցիալական աջակցության ժամկետը բոլոր շահառուների համար սահմանել մինչև 2025 թվականի մարտ ամիսը:

Այս համատեքստում նախ պետք է դիտարկել հետևյալը, որ աջակցությունը ունի նպատակ անձանց ապահովել կեցության և այլ ծախսերով, հետևաբար ապագայի ինչ ակնկալիքով է նախագիծ մշակող մարմինը սահմանել, որ մինչև 2025 թվականի մարտ ամիսը տեղահանված արցախցիները չեն ունենալու կեցության հարց, մասնավորապես՝ պետությունը Փախստականի մասին կոնվենցիայի հռչակված սկզբունքերով կիրառել է տեղահանված անձանց նկատմամբ ժամանակավոր պաշտպանություն, որը ունի նպատակ ապահովել վերջիններիս կեցության հարցը, միևնույն՝ սույն դեպքում ոչ իրավաչափորեն է մշակվել նախագիծը, առանց նման պայմանների առկայության ուսումնասիրություն, ուստի՝ պետք է նախ և առաջ հիմք ընդունել թե քանի արցախցի է մինչ օրս դարձել բնակարանային ապահովման շահառու, և ի՞նչ միտումով է հաստատվում այն փաստը, որ մինչև վերջնաժամկետ 2025 թվականի ապրիլ ամիսը՝ անձը կունենա կացարան ՀՀ տարածքում, և չի ունենա կեցության համար նախատեսված սոցիալական աջակցության անհրաժեշտություն:

Առաջարկում ենք, աջակցության ժամկետը բոլոր տեղահանված անձանց համար սահմանել մինչև՝ 2025 թվականի դեկտեմբեր ամիսը, սակայն աջակցության դադարման հիմքը սահմանել՝ անձանց կամ վերջիններիս ընտանիքի անդամների բնակարանային ապահովման շրջանակներում շահառու հանդիսանալը և միաժամանակ դրա արդյունքում ՀՀ տարածքում զույգ ձեռք բերելու փաստը:»

13.Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված արցախցիների հետ հանդիպումների ընթացքում արձանագրված կարիքները

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված արցախցիները, ովքեր Լեռնային Ղարաբաղում զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ, ունեցել են կահույքի արտադրամաս կամ զբաղվել են գյուղատնտեսությամբ տեղափոխվելով ՀՀ փորձում են իրենց ունեցած գիտելիքների և փորձի շնորհիվ ստացած գործունեությունը շարունակել Հայաստանում, սակայն, չունենալով բավարար դրամական միջոցներ չեն կարողանում գնել անհրաժեշտ սարքավորումներ, կամ գյուղատնտեսության համար այլ միջոցներ, իսկ բանկերի կողմից առաջարկվում են բարձր տոկոսադրույքներով վարկեր:

ՀՀ կառավարությանը առաջարկում ենք, Լեռնային Ղարաբաղից տեղահանված արցախցիների համար սահմանել ցածր տոկոսադրույքներով, սուբսիդավորվող վարկերի տրամադրման կարգ, ՀՀ-ում իրենց մասնագիտական գործունեությունը շարունակելու, միևնույն ժամանակ տվյալ աջակցությունը կնպաստի զբաղվածության զարգացմանը և փոքր և միջին բիզնեսի զարգացմանը:

14. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի բացակայության առկայության խնդիր այս պահին ամենաակտուալն է, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման ժամանակ անձիք հնարավորություն չեն ունեցել իրենց հետ վերցնել քաղաքացիական կացության ակտերի գրանցում ենթադրող փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ՀՀ քաղաքացիություն ստանալու համար:

Անհրաժեշտ փաստաթղթերի կրկնօրինակները ստանալու համար դիմում են ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին, ապա ստանում են մերժում, այն հիմքով, որ ՀՀ բազաները չկան կամ թերի են:

Այս պարագայում իրավունք հաստատող փաստաթղթերի վերականգնման համար միակ հնարավոր տարբերակը մնում է դատարան դիմելը:

Առաջարկում ենք, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման համար ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում սահմանել հետացված և արագացված ընթացակարգ հիշյալ փաստաթղթերի հաստատման և վերականգնման համար, միևնույն ժամանակ հիմք ընդունելով այն փաստը:

Ի վերջո արձանագրում ենք, որ ՀՀ-ը ստանձնել է պոզիտիվ պարտականություն ընդունելու և իր հոգածության տակ առնելու 2023 թ. սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ սանձազերծած ագրեսիայի և զինված ուժի սպառնալիքի ներքո բռնի տեղահանված անձանց, հետևաբար պարտավոր է ապահովել իրականացվող ծրագրերի հասանելիությունն ու մատչելիությունը այն անձանց շրջանում, ում իրավանքների պաշտպանության ու վերականգնման նպատակով դրանք ընդունվել են:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված արցախցիներին տրամադրվող իրավական աջակցության տրամադրման առաքելությանն ընդգրկված իրավաբանները և կոնտակտային անձինք

Հ/Հ	Անուն Ազգանուն	Աջակցության տրամադրման տարածք	Գործառույթ
1	Ալբերտ Նալբանդյան	Երևան ՀՔԱՎ աշխատակից	Իրավախորհրդատու փաստաթղթավորող
2	Սամսոն Գալստյան	Երևան ՀՔԱՎ աշխատակից	Իրավախորհրդատու փաստաթղթավորող
3	Ռաֆիկ Վարդազարյան	Կոտայք, Արարատ	Իրավաբան
4	Արինա Մեծոյան	Արմավիր,Շիրակ, Արագածոտն	Իրավաբան
5	Արևհատ Պետրոսյան	Լոռի, Տավուշ	Իրավաբան
6	Լուսինե Մարտիրոսյան	Վայոց Ձոր, Գեղարքունիք	Իրավաբան
7	Սիրարփի Մարգարյան	Սյունիք	Իրավաբան
8	Արփի Հովհաննիսյան	Երևան	Կոնտակտային անձ
9	Լիլիթ Գևորգյան	Երևան	Կոնտակտային անձ
10	Անի Հովհաննիսյան	Կոտայք	Կոնտակտային անձ
11	Միեր Կարագյոզյան	Արարատ	Կոնտակտային անձ

12	Սուսաննա Մատինյան	Կրմավիր	Կոնտակտային անձ
13	Գոհար Ղարիբյան	Շիրակ	Կոնտակտային անձ
14	Նարեկ Բոցինյան	Կրաձոտն	Կոնտակտային անձ
15	Գևորգ Քոթանջյան	Լոռի	Կոնտակտային անձ
16	Մարիամ Աղինյան	Տավուշ	Կոնտակտային անձ
17	Նանե Ասատրյան	Վայոց Ձոր	Կոնտակտային անձ
18	Մանան Մխիթարյան	Գեղարքունիք	Կոնտակտային անձ

Վանաձոր, ՀՀ , 2001
Տիգրան Մեծի 59

(+374) 322 4 22 68
(+374) 77 34 22 68

info@hcav.am

www.hcav.am
www.facebook.com/hca.vanadzor